



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՄԵՆՏՐԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՎԵՏԵՐԱՆԱՐԻ ՏԱՐԻ

ԶՄԻՌՆԻԱ ՇԱՐԱԹ 15 ՄԱՅԻՍ 1876

ԹԻՒ 1040

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ի մասին Արևելեան ինդուստրիալ մեծ տեղութեց մէջ եղեալ համաձայնութիւնն վերահաստատեցաւ Պէրլինի մէջ ՚ի խորհրդակցութեանն՝ որ տեղի ունեցաւ ՚ի մէջ Ռուսիոյ և Գերմանիոյ կայսերաց ՚ի ներկայութեան Գորդչագով իշխանին, Պիամարք իշխանին և Անտրասի կոմսին :

Այս խորհրդակցութեանց արդիւնքն եղած է, կըսեն, զինադադարում մի տնօրինել և ապաստել որ Բարձրագոյն Դուռն ՚ի գործ դնէ զխոստացեալ նոր բարեկարգութիւնները Պոստիոյ և Հէրսէկովինի մէջ :

Սակայն հաշիւի ՚Օյադուրի՝ օրագիրն իւր թուոյն մէջ որ ՚ի 7 Մայիսի (ն. թ.) նոր տեղեկութիւններ կը հրատարակէ յարաբերութեամբ երկրորդ առաջարկութեան միոյ՝ որ Անտրասի կոմսն մատուցեր է Պէրլինի խորհրդակցութեանն, իբրև հիմն հաշտութեան ապստամբեալ գաւառացի : Այս երկրորդ առաջարկութեան նպատակն է, կըսէ յիշեալ օրագիրն, բաժանումն երկուց տարբերաց՝ այսինքն մահաձեռականաց և քրիստոնէից՝ որ ըսել է վերագառնալ միջին դարուն մէջ հաստատեալ իրաւասութեանց, որոց արժէքն արդէն փորձուած է վասնզի Սէրպիան այս կարգադրութեան ներքև ապրեցաւ յետոն տարիէն աւելի (1815էն մինչև 1867) : այսինքն միևնոյն երկրին մէջ երկու իրաւասութիւնք կային : մէկը՝ մահաձեռական և միւսն՝ քրիստոնէացի : Այս երկրորդ առաջարկութիւնն ևս հաշիւի ՚Օյադուրի՝ օրագրին նայելով, երկու իրաւասութիւն հաստատել կըսնօրինէ Պոստիոյ և Հէրսէկովինի համար՝ մէկը օսմանեան և միւսն քրիստոնէացի : Մահաձեռականներն օսմանեան իրաւասութեանն կախուած պիտի ունենան և քրիստոնէացիք քրիստոնէացի իրաւասութեանն իսկ այն գիւղորէից մէջ ուր բնակչաց մեծագոյն մասն քրիստոնէացի է, միմիայն քրիստոնէացի իրաւա-

սութիւն պիտի լինի : Օգոստովաու Սուլթանն իւր վերահաստատեալ իրաւունքն ուղղակի պիտի գործադրէ ՚ի վերայ մահաձեռական ժողովրդեան իսկ քրիստոնէացի ժողովրդեան վերայ զնոյն իրաւունքն անուղղակի կերպիւ պիտի գործադրէ իւր հարկատու կառավարիչ իշխանաց միջոցաւ : Այլև Բարձրագոյն Դուռն հաստատուն պիտի պահէ զպահապան զօրազնդերն զորս ունի Պոստիոյ և Հէրսէկովինի բերդերուն մէջ :

Ահա այս օրինակ է, կըսէ վերոյիշեալ օրագիրն, Անտրասի կոմսին երկրորդ առաջարկութեան համաձայն բովանդակութիւնն : Այսու ամենայնիւ գոտարահաւատարի կերևի մեղայտ պիտի առաջարկութեան զգոյութիւնն : և եթէ ստոյգ ևս լինի, չեմք կարծեր որ Բարձրագոյն Դուռն ընդունի այնպիսի առաջարկութիւն մի, երբ կայսերական զօրագնդերն իրենց երկերի յաղթութիւններովն օրբստօրէ նուաճելու վերայ են զապստամբութիւնն :

Սէլանիկի մէջ տեղի ունեցած ամենացաւալի եղեւնագործութիւնն այսինքն Գերմանիոյ ու Գաղղիոյ հիւպատոսաց սպանումն յոյժ տխուր տպաւորութիւն ըրաւ Եւրոպիոյ տէրութեանց վերայ, այսու ամենայնիւ քաղաքային կերպարան մի չունենալով, ոստիկանութեան ատենանին առջև դրուելու ոճրագործութիւն մըն է : որոյ հարցաքննութիւնն կը շարունակուի Սէլանիկի մէջ : ուր արդէն ՚ի գլխապարս յանցանորայ ութ հոգի կախուեցան : Բարձրագոյն Դուռն որ Պէրլինի և Փարիզի օտարերկրացի զեկայանաց միջոցաւ, իւր խորին ցաւակցութիւնն յայտնեց Գերմանիոյ և Գաղղիոյ կառավարութեանց, պատրաստ լինելով Սէլանիկի ամենագոյն զեկային համար արգարութիւն ընել անաչառապէս և ինդուստրիալ օրինաւոր հատուցում տալ, նմանապէս հարկաւոր զգուշութիւններն ՚ի գործ դնել վասն ապահովութեան հիւպատոսաց ապագային մէջ, տարակոյս չկայ թէ շու-

տով պիտի կարգադրուի այս ցաւալի դեպքը : Եւ այս բանին երաշխաւորութիւն կը համարուի նորընտիր Մեծ-Նպարգոս բարձրաւ Մէհմետ Բիւշտի փաշային հեռատես իմաստութիւնն և գործունեաց խոհեմութիւնն նախարարաց, յորոյ շրջապատեալ է Նորին Բարձրութիւնն :

Պէրլինէն ամսոյս 6-18էն դրեալ նամակներն կը քննուցանեն թէ՛ ըստ դատողութեան գլխաւոր օրագրաց՝ վերջին խորհրդակցութեանց մէջ երկու կայսերաց առաջին նախարարաց կողմանէ եղած որոշումներովն ընդհանուր խաղաղութիւնն վերահաստատեցաւ : Նոյն իսկ Բէրլինի օրագիրն կը վկայէ թէ Եւրոպիոյ քաղաքային կացութիւնն ոչ է այնչափ երկարական կամ վտանգաւոր ինչպէս որ կըսուեանէր նախքան զառուրս ինչ :

Մահաւոր նշանակութեան արժանի են նաև Յրանչիսիու-Յովսէփի կայսեր խօսքը՝ զոր առտորճօնը գրական պատգամաւորներն ընդունելու առթիւ զրոյցեց Բէշտի մէջ : Նորին վերահաստատութիւնն ասաց թէ՛ Արևելքի մէջ պատահած դեպքն ևս քան զևս ամբացուցին զյարաբերութիւնն երկու կայսերաց և երկու յաղագաց : որով ապահովեցաւ Եւրոպիոյ խաղաղութեան հաստատութիւնն : Աւստրօհունգարիոյ վերահաստատութեան լինելով ի պաշտպանութիւն ջանքովն ՚ի տէրութեանց ջանքն ՚ի պաշտպանութիւն ջանքովն ՚ի Գրան առ ՚ի կատարելապէս հանդարտեցնել զպատմութեալ գաւառսն իւր, առանց յաջող վարձանի պիտի չմնան :

Իրաց այս խաղաղաւորական փոփոխութեանն ապացոյց կը համարուին նախ Գերմանիոյ Պոստիոյ գրամաղեղջին հարիւրին 3 1/2ի ինչն Ներկորդը : Հունգարիոյ զինուորական պիւտճէին 750,000 Ֆիորին նուազ որոշուին, և վերջապէս Բուստանիոյ ներկայ 1876 ամին զինուորագրութեան ՚ի կախ մնալն, ինչպէս կը քննուցանէ Պոլքեշէն ամսոյս 7էն հասեալ հեռագիր մի :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՄԱՌՈՏ ՆՎՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ (1)
Ութ և տասներորդ ամի հանգիսի հարցաքննութեան ուսմանց աշակերտուհեաց Ս. կատարիէն օրիորդական դպրոցին Նորլուդայու, հաստատելոյ ՚ի մեծարգոյ հայրենասէր Պարոն Մանուկայ Որդանանեան, բնակելոյ ՚ի Պաղպիսա (Հնդկաստան) :

Համաձայն գրաւոր յայտարարութեան արժատեք Մետրոպոլայ Կ. Դաւթեանց, համարակալի օրիորդական դպրոցին, ՚ի 13 Մարտ ամսոյ՝ յառուր տօնի անուանակոչութեան մեծարգոյ պարոն Մանուկայ Որդանանեան հոյրենասէր հիմնադրի նոյն դպրոցին, յիս տեսանելոյ զուրբ արհուրդ պատարագի յեկեղեցւոյ մենաստանի կուսանաց, բազմութիւնք յոյժ հոգևորականաց, պարոնայց և տիկնայց Նորլուդայու խմբեցան խունեցան ՚ի հոյակապ և ՚ի մեծաշէն

(1) Ըստ գրութեան գերա. Խաչատուր վարդապետի կարգապետեան՝ առաջնորդական Փոխանորդի Ս. Կատարիէն վանքից և վանքից՝ ընդ ամսարուով 9 Ապրիլի, արժան համարեցար հրատարակել զեկեղայ յօդուածն : Ասկայն հարկ համարիմք այս առիթ յուշ անել Նորին Պարագայատուութեան քի ոչ է արժան նմա զլսեալ վանքէ ցայտօր գրաժանորդարիւն իւր գնեկ վասն միոյ օրինակի Արշալուստոյ : մանաւանդ զի յիշեալ խաղաղ վարդապետն՝ որպէս լսեմքս, ոչ է գարկ ՚ի նորարարեմէ եւ ունի գեղեցիկ դրամագրութիւն մի :

դպրոցական դահլիճն և բազմեցան իւրաքանչիւր յաթուս և կամ ՚ի տեղիս իւրեանց : Շարեալք կային ՚ի վերայ գրասեղանոց գրչութիւնք, ցւցակ և յիշատակութիւնք ուսմանց և աղէտգործեալ ձեռակերտք ամենայն աշակերտուհեացն, զորս նախ հանդիսականք միառմի տեսին և հաւանեցան, ապա զառաջինն՝ քաղցրաձայն ներգաշնակեցին աշակերտուհիք զերզն որոյ սկիզբն յօգի «Մեծ են փառք քո, Տէր», երկրորդ քննեցան առաջին դասքն բարձրաձայն ՚ի վարժապետէ իւրեանց ՚ի Պ. Աւետիսէ Կ. Մ. Զօհրապետեանց յընթերցմունս և ՚ի բառական մեկնութիւնս սրբոյ Աւետարանին, ՚ի «Հաւատապատում» քրիստոնէութիւն Մօսկոյ Մագիստրոսի, ՚ի համառօտ պատմութիւնս Հայոց, ՚ի Գերականական հարցմունս մասանց բանի և նշանակութեան նոցա և ՚ի հաշուեկիտութիւնս ըստ թուաբանական կանոնայ և այլն : և ամենայն հարցմանց անյապաղ տային զպատասխանիս : և որով ցուցանէին զվարժութիւն իւրեանց ՚ի նոսին՝ յօրախոսութիւն սրտի հանգիսականաց : Նայնպէս և երկրորդ դասքն ևս քննեցան ՚ի վարժ ընթերցանութեան և ՚ի բառական թարգմանութեան սրբոյ Աւետարանին ՚ի գրաբարէ յաշխարհաբարն, ՚ի քրիստոնէութեան և ՚ի հայիւս, ՚ի գումարմունս թուոց և ՚ի գրչութիւնս, և վարժ երևեցան ընդունելով վարժախոսանս բազմականաց : Յետ այոր եղանակեցաւ միւս երգն քաղցրաձայնութեամբ, որոյ սկիզբն է «Մեծ են դու Տէր, մեծ են փառք քո Աստուած հըր» : Եւ ապա քննեցան աշակեր-

տուհիք Պ. Յակոբի կարգապետեան դասատուին, և կրթեալք գտան ՚ի վերջանութեան և ՚ի բառական թարգմանութիւնս սրբոյ Աւետարանին ՚ի համառօտ քրիստոնէականութեան, ՚ի գրչութիւնս, ՚ի հայիւս և յայլ գաւառ : և քաջալերեցան ևս քան զևս յառաջադէմ գաւառիկ : Զինի այսոցիկ ներգաշնակեցին կարի ողջարժեք եղանակաւ զազգային երգն՝ ո՛հ Արամ, Արամ : որով յեռանդն ազգասիրական վառէին սիրտք ամենեցուն ՚ի լսելն :

Յաւարտել սոցին, ութ աշակերտուհիք յառաջին դասէն զոյգ զոյգ երանէին ՚ի վերայ բարձրաւանդակի միոյ որ ՚ի միջամայրին և բարձրաձայն առողջանութեամբ հարցեալք ՚ի միմեանց ընթերցանութիւն զհամառօտ ճառս և զտեսնաւորս ՚ի վերայ քաջագոյն գիւցազանց մերոց նախնեաց : Նշանաւոր եղև ՚ի սոսին չափարանեալ հարց և պատասխանին «Զարդասէր մօր՝ և ուսումնասէր դստեր» : զոր երկու աշակերտուհիք գեղեցիկս ընթերցան և զմայրեցուցին զգաւս թէ պարոնայց և թէ տիկնայց տեսանելով այնու զի օրիորդք զուսումն առաւել զերարասէին քան զաշխարհային զարգօս և զաւելորդ պըքանս իւրական սեռին և վասն այլոց, և բառականին յուրին զուրախութիւնս սրտից իւրեանց և զուրախանեցին զնոսին :

Յետ վերջանալոյ այսոցիկ ամենայնի՝ յատենս խաղաց Պ. Աւետիք Կ. Մ. Զօհրապետեանց վարժապետն և ազուր ներգործութեամբ արար զեղեցիկ և իմաստալից ատենախօսութիւն մի :

—Ստորոգ է թէ Կ. Պօլսոյ իւրէմաներուն և սօփ-տաներուն մէջ յանցելուն փոքրիկ խո ովու-թիւն և խորտում մի տեղի ունեցան 'ի յայտա-րարութիւն զժգոհութեանց իւրեանց ընդ գէմ ընթացից նախորդ Մեծ—Եպարգ ոսին և նախորդ շէյխ—իւլ—իւլամին սակայն յորմէ հետէ կայ-սերական հրովարտակա Մեծ—Եպարգոսի ծայ-րագոյն պաշտօնն Մէհմէմէտ Բիւլայի փաշային և շէյխ—իւլ—իւլամի բարձր պաշտօնն խայրուլլահ շէյխնորին յանձնեցան, նմանապէս յորմէ հետէ Հիւսէյին Աֆէրի փաշան պատերազմական գործոց նախարար և Ապտիւլ ֆէրիմ փաշան սէրապը Էքրէմ անուանեցան, հասարակաց անդորրու-թիւնն և բարեկարգութիւնն կատարելապէս ապահովեցան յիշեալ մայրաքաղաքին մէջ :

Կըհաւաստեն թէ Միթհաւ փաշան, Տէրվիշ փաշան և Նամիք փաշան կայսերական հրամա-նաւ, նախարարաց խորհրդոյն անդամ կարգուե-ր են առանց իւրաքանչիւրոյն յատկացեալ մաս-նաւոր պաշտօնի :

Չկնի նախարարական խորհրդակցութեան միոյ՝ որ տեղի ունեցաւ ամսոյս 4ին 'ի պաշտօնա-տունն պատերազմական գործոց, բարձրաւ սէր-տարը Էքրէմ Ապտիւլ ֆէրիմ փաշան հետեւեալ օրն մեկնեցաւ յԱղբիւնուլլայի և 'ի Գիլիպէ երթալու, ուր այս գաւառաց կացութիւնը պի-տի քննէ, իւր ներկայութեամբը ահաբեկ եղ-եալ բնակիչներն պիտի քաջալերէ և թաթարպա-զարճըքի ու Սոֆիայի մէջ պատահած խռովու-թեանց պատճառներն իմանալով կայսերական կառավարութեանը պիտի հաղորդէ :

ԱՉՔԱՅԻՆ

Կ. Պօլսոյ ազգային Պատրիարքարանէն հե-տեւեալ յայտարարութիւնն յուղարկեցաւ մեզ 'ի հրատարակութիւն

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԱՉՔԱՅԻՆ ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

Սուրբ Էլմիաճնի Սինօզէն ներկայ տարուոյս 4 Մարտ ամսաթուով և 431 թուահամարաւ եկած պաշտօնագիր մը հետեւեալը կը ծանուցանէ :

Բնիկ Ռուսիոյ Աղէքսանդրապօլ քաղաքէն Մարտիրոս վարդապետ Տօնականեանց՝ որ եր-բեմն սրբոյն Գայիանեայ վանուց վանահայրն էր, 1866 թուականին փախչելով գաղտնի իւր պաշ-տօնատեղիէն՝ Աղէքսանդրապօլ կերթայ և անդ

ի վերջարանութեան արժանապէս գրուածեաց զհայրենասիրական բարերարութիւն մեծարդոյ Պ. Մանուկայ Որդանանեան, որ յուրմետանն ամաց հետէ անընդհատ բաւականին գումարս օժանդակեալ և օժանդակէ միշտ վասն ուսմանց աշակերտութեանց, որ իբրև զիւր թափել 'ի լապտեր մտաց նոցա ոչինչ զլանայ ազգասիրա-բար և բաց յայց և բաց 'ի մեծաքանակ ծախ-սարարութեան վասն հոյակապ կառուցման և մեծաչէն գալորոցական դահլիճն նախ քան զամս ուրիշ տանն, յայսմ ամի է որ՝ վասն առաւել ընդարձակեցուցանելը զայն 'ի հանդուածութիւն հանդիսականաց յայսպիսի ընդհանրական քըն-նութեան և վասն ըստ օրինի կարելոյ կատարել զեղանակ հարցաքննական պարագայիցն, ոչ զլացաւ զծախսն առաւել քան զհարիւր թու-մանս, որով 'ի հիմանց կառուցաւ նորոգ միւս մեծ սենեակ՝ կից առաջնոյն, որպէս տեսանէք ուստի և սակս այսպիսի անզոյք բարերարու-թեանց նորս, որ ինքն անկարօտ այնպիսի լապտերաց 'ի կարօտութիւնս հայրենակցաց իւ-րոց զիշեալ առնէ զայնս 'ի լուսաւորութիւն նոցա, ըստ պատշաճի արար բարեմայրութիւնս առ Աստուած՝ երկարել զթիւ պատուական կե-նաց նորս և 'ի խնամս ողորմութեան իւրոյ ան-քոյթ պահպանել զխորին ծերութիւն, և երկ-նային քայցր օրհնութեամբ օրհնել զնա 'ի յոյս և 'ի միթարութիւն նոյն գալորոցին և հոգևոր գաւակայն իւրոց աշակերտութեանցն այնոցիկ :

Դեղգ Կ. Մ. Զօհրապետից : Նորվուլա, 26 Մարտ 1876

մանկավարժութեան կը պարտապի . սակայն իւր անհանդարտ և խռովայոյղ բնաւորութեամբը չկրնարով մնալ անդ՝ քանի մը տարիէն Տաճկաս-տան կանցնի, ուր կը յաջողի Ղօշափանուց վա-նահայրութիւնը ձեռք բերել ունէ եղանակաւ : Բայց անդ ևս չկրնարով շարունակել առանց գի-տութեան կեդր. կրօնական ժողովոյ կը դառնայ 'ի հայրենիս իւր, և հոն ոչ միայն 'ի նպատ ան-ձին ինքնուրոյն հանգանակութիւններ ընելու, այլև անվայել գնացիւք ժողովուրդեան գայթակ-ղութեան և բամբասանաց առիթ տալու կը-յանդ գնի : Թէև 'ի հոգևոր իշխանութենէ շատ անդամ՝ կը խրատուի, կը յանդիմանուի, բայց չզգաստանար բնաւ և ապերասան ընթացից մէջ կը յարատեւէ :

Մինչդեռ Ս. Էլմիաճնի Սինօզէն յիշեալ վար-դապետն 'ի Սեւան զրկելու և հոն զանի ապաշ-խարանաց ենթարկելու վճիռ կուտայ, նա չու-ղելով հնազանդիլ անօրէնութեան հոգևոր իշ-խանութեանն՝ գաղտ իմն յերևան կը մեկնի, քաղաքական իշխանութեան կը դիմէ և բողոք կը բառնայ . և երբ կը տեսնէ՝ թէ ձեռնունայն կը մնայ իւր անիրաւ բողոքանաց մէջ, նորէն Աղէքսանդրապօլ կերթայ իւր անուղղայ և գայ-թակղեցուցիչ ընթացքը շարունակելու ընթացք մը՝ որ հակառակ էր կանոնաց կուսակրօն հոգև-որականութեան և քրիստոնէութեան և մարդ-կութեան . մանաւանդ զի նա առ ոչինչ գրելով՝ իւր խռովայոյղ բնաւորութիւնը և անվայել ու գայթակղեցուցիչ բարքն ուղղելու համար հո-գևոր իշխանութեան կողմանէ գործադրուած համողական կերպերը՝ բոլորովին կը մոռտա-նայ, և իւր ընդդէմ կանոնաց եկեղեցւոյ և քրիստոնէութեան վարած անառակ և ստահակ գնացքը կուգէ յառաջ տանիլ : Ուստի Սինօզէ՛ ամենայն Հայոց վեհա. Հայրապետի հրամանա-լուծեց իսպառ 'ի քահանայութենէ յիշեալ Տօ-նականեանց Մարտիրոս վարդապետն ըստ կանո-նաց Ս. Եկեղեցւոյս Հայաստանեայց՝ իբրև ան-արժան կոչման իւրում . և ընդ նմին հրաման զրկեց Աղէքսանդրապօլու Հայոց հոգևոր կա-ռավարութեան որ զնա յատեան կուգէ, ու վե-ղարը, փիթօնը և ուրիշ հոգևորականի վերաբեր-եալ սքեմը մերկայցնելով 'ի նմանէ՝ յանձնէ զինքն Գաղաքական տեսչութեան, որ զանի հարկատուաց կարգն անցնէ :

Բայց քանզի լուսած է թէ նոյն Տօնականեան-ցը նորէն Տաճկաստան փախած է խաբել զարար-զամիտս, ուստի ըստ հաճութեան վեհա. Հայրա-

Յանցելուն Բարձրագոյն Դրան կողմանէ 'ի մասին ապահովութեան կտակաց ոչ—մահմէտա-կան ժողովրդոց՝ հրամանագիր մի յուղարկեցաւ Կ. Պօլսոյ ազգային Պատրիարքարանին . որ ըստ ժամանակին հոգ տարեալ հարկաւոր պատաս-խանն տուաւ :

Ահառասիկ պատճենն նոյն հրամանագրին : Օգոստոսիաւ կայսրը իր հրովարտակովը հրա-մայած ըլլալով որ գաւառաց մէջ ոչ—մահմէ-տական հպատակոց կտակագրերը ապահովու-թեան տակ առնուին, և ինամակալ ունեցող ոչ—մահմէտական որոց ժառանգական ինդրոց միջամտութիւն չըլլայ, միայն թէ երբ գանգատ ըլլայ թէ ինամակալ մը որբին ստացուածքը կը վատնէ, այն ատեն կառավարութիւնն իր հսկո-ղութեան ներքեւ առնու :

Առ այս պարտուպատշաճը անօրինելու թէև պիտի ձեռնարկուի, սակայն ինամակալ չունե-ցող այսինքն անոք և անտէր ոչ—մահմէտական որբոց ստացուածքը չմխտելու համար սահման-ուելիք կանոնին վրայօք պատրիարքարանաց կարծիքներն առնուլ հարկ եղած ըլլալով, Գոր-ծադիր Բարձրագոյն ժողովոյն որոշմամբ, ինչ-պէս միւս Պատրիարքաց և կրօնապետաց յանձ-նարարուած է, նոյնպէս և Չեր Սրբազնութեանը կը յանձնարարեմք որ շանագիր գտնուիք պէտք եղածը շուտով գործագրել և տեղեկագրել :

Ահառասիկ պատասխանն, որ տրուեցաւ յազգային Պատրիարքարանի :

Արքունի հրովարտակին մի տրամադրութիւնն ալ Օսմանեան Պետութեան քրիստոնեայ հպա-տակ ազգաց կտակաց գործադրութեան ապու-

պետի ամենայն Հայոց՝ կարևոր կը համարի Սինօ-զը տեղեկութիւն տալ ազգային պատրիարքա-րանիս 'ի պարտուպատշաճ անօրէնութիւն :

Արդ՝ Կ. Պօլսոյ կեդր. վարչութեան կրօնական ժողովոյ որոշման համաձայն ներկայ պաշտօնա-կան Յայտարարութիւնս կը հրատարակուի յամս-նայն ազգային լրագիրս Տաճկաստանի, որպէսզի գերաւ Առաջնորդք գաւառաց, տեղապահք, փոխանորդք, վանահարք և քահանայք գիտ-նալով թէ նոյն Տօնականեանցը զրկուած է պա-տուհետեւ 'ի հոգևոր կոչմանէն և չէ նա հոգևոր պաշտօնեայ Սուրբ Եկեղեցւոյս Հայաստանեայց, չընդունին զնա երբէք քահանայ կամ վարդա-պետ, և ուր որ հանդիպի նա՝ անենելին չի թոյլ-ատրեն նմա մերձեցալ յորևէ հոգևոր պաշտօն :

Կ. Պօլիս, (Տեղի կնքոյ) 22 Ապրիլ 1876 (Պատրիարքարանի)

Կ. Պօլսոյ ՆՈՐԱԳԻԻ անուն ազգային թերթին մէջ յոյժ հետաքրքրական և գրեթէ անհաւա-տալի տեղեկութիւններ կը թեռնուիք 'իմանին որոշման միոյ Հապէշի կառավարութեան : Որո-շումն որով ուսումնական վարդապետք և ե-պիսկոպոստնք պիտի խնդրուին եղեր 'ի սուրբ Էլմիաճնէ, որպէսզի Հապէշաստանի նոր բացուե-լի վարժարանաց մէջ կրօնական վարդապետու-թիւն և այլ հարկաւոր ուսմունք դաս տալէ ետեւ, հայերէն գրաբար լեզուն ևս ուսուցանին աշակերտաց . քանզի կառավարութիւնն որոշե-ր է, ըստ թիւթակցին ՆՈՐԱԳԻԻ, որ Հապէշաստանի պաշտօնական գրութիւնքն հայերէն գրաբար լեզուաւ լինին : Միթէ զարմանալի և անհաւա-տալի չէ որ երբ մեք վեր գրաբար լեզուն մեռեալ կը համարուի և նորա դասատուութիւնն երթալով գրեթէ կը խափանի ազգային գալորոցաց մէջ, միթէ զարմանալի չէ, կըսեմք, որ օտար ժողովուրդ մի փափաքի և կամենայ խօսիլ և գրել զայն պաշտօնապէս :

Ահառասիկ ՆՈՐԱԳԻԻ Թերթին վերոյիշեալ տեղեկութիւնքն .

Երկրպետի մեր թղթակցէն ստացած ընդար-ձակ տեղեկութիւնս մեր ազգայնոցը հաղոր-դելն ամենակարևոր նկատելով կը թուածք համառօտաբար զետեղել աստ 'ի գրաւուսն ու-շադրութեան սուրբ Յակովբայ վանուց միաբա-նութեան :

Եթովպական կառավարութիւնը որոշե-ր է մասնաւոր պաշտօնակալ մը ուղղել առ մայր Ա-թոռն Արարատայ և խնդրել ընդհանուր լուսա-

հովութիւնն և անտէրունչ որբոց ընչից ապա-հովութեանը մասին հարկ եղած կանոնաց հաս-տատութիւնն ու գործադրութիւնն ըլլալով, Չեր Բարձրութիւնն իւր կրկնակի հրամանա-գրերով պահանջած էր Պատրիարքարանէս այն կանոնաց նկատմամբ կարծիք յայտնել :

Պատրիարքարանս այս մասին յատուկ մասնա-ժողով մը կարգած ըլլալով, յիշեալ մասնաժողո-վը կտակ ընելու գործը մինչև որոշեալ մէկ սահ-մանի մը մէջ ազատ թողելու և գործողութիւնն ու արձանագրութիւնը կանոնաւոր կերպով ը-լալու համար, Պատրիարքարանիս մինչև ցարդ 'ի գործ գրած և գնելիք եղանակներն 'ի քննի-առնելէ ետեւ ծրագիր մը պատրաստեց որ հե-տեւեալ արդիւնքն ունեցած է :

Ամեն Հայ անհատներ, երբ զուակ ունին, իրենց ստացուածքն եղած շարժական ընչից և գոյից և անշարժ միւլք, շէնք և հողէն միայն մէկ երրորդը կրնան ամբողջապէս կտակել ինչ-պէս որ կը կամին :

Եթէ զուակ չունին, և ամուսին և հայր կամ մայր և կամ թոռ կան, վերոյիշեալ ստացուա-ծոց կէսը, իսկ եթէ ասոնք չկան ուղած կը պոլին կրնան կտակել :

Կտակը չորս եղանակաւ կը ըլլայ :

Ա. Կտակ ընելու փափաք և կամք ունեցողն եթէ պաշտօնապէս կտակագիր պատրաստելու որ և է պատճառաւ կարող չըլլայ, իր տաներէց քահանայն կանչելով իր կամքը կը յայտնէ . տա-ներէց քահանայն անմիջապէս պատկայութեան ղեցւոյն աւագ քահանայն և 'ի բացակայութեան աթոռակալ քահանայն, և թաղ. խորհուրդէն

Վերջինս քանակական և վերահսկող Պատրիարք Գեորգ սրբազան կաթողիկոսին՝ որ 20ի օրը ուսումնական վարդապետներ և 4 եպիսկոպոս յանձնէ իրեն վասն կրօնական և ուսումնական բարեկարգութեան յիշովական երկրին : Յի յիշ նոր վարժարան պիտի բացուի յիշովական զանազան կողմերը :

Այս վարժարանաց երեքն իգական և հինգն արական սեռի պիտի յատկացուի :

Յերկրին պաշտօնական լեզուն հայերէն գրաւոր լեզուն վերջածելու համար նոր բացուելիք վարժարանները նախ հայերէն լեզուն պիտի սովորեան և ապա կարևոր նկատուած ուսումնականներն Հայ լեզուաւ պիտի աւանդուին :

Պարոնցները ցերեկօթիկ պիտի ըլլան և հինգ տարեկան տղէն մինչև երեսուն տարեկան երիտասարդք պիտի ընդունին : Յիշեալ վարժարանաց մէջ յիշովական լեզու բնաւ չպիտի խօսուի և մինչև որ հայերէնի վարժութիւն գոյանայ՝ աշակերտք նշանացի կերպով պիտի բացարձակ լինի միտքը : Գպրոցաց մէջ հայերէն լեզուն սովորող չափահասք հետզհետէ կառավարութեան պաշտօններու զիտի դուրսն :

Ամուսնութիւնը կրօնական և քաղաքական պիտի ըլլայ, և բոլոր վարժարանաց դասատու անօրէններն ՚ի դասուց կղերականաց պիտի ըլլան ՚ի բաց առեալ զինուորական և բժշկական գպրոցները, որոնք մէկ տարի վերջը պիտի բացուին և անդ Հայ լեզուին վարժուող աշակերտներէն պիտի ընդունուին :

Անտարակոյս եւ՛ք որ վերահսկող սրբազան կաթողիկոսն ըստ ինդրանաց յիշովական կառավարութեան կարի յարմարաւոր անձինք կընտրէ յիշեալ երկրին մէջ կրօնական, ազգային և ուսումնական գաստիարակութիւնն առատապէս տարածելու և հիմնապէս տպաւորեցնելու :

Մեր թղթակիցը կը յաւելու թէ յիշովական կայսրը գոհարազարդ խաչ մը պիտի ուղղէ այս առթիւ Նորին վերահսկող Սրբազանութեանն :

Մ Ա Ղ Ո Յ Ս Ա Ր Ա Տ Ե Ա Ն

Բեդէրպուրդի Հայոց եկեղեցւոյն աւագ քահանայ արժաւոր Գրիգոր Հօր յանկարծահասակ անձանց ծանուցանելով մեզ, նոյն մայրաքաղաքին մեր յարգոյ թղթակիցը բարեխիշատակ հանգուցելոյն փառաւոր յուզարկաւորութեան տարբեր հանգէսն և նորա բարուց և վարուց համար մեզ անդամ մը ներկայ կերթի կտակարարին մտ. ասոնց՝ և եթէ հոգ Ըլլայ Երանեաց և որքան անձանց ներկայութեանը կտակարարն ըստ վերոյիշեալ պայմանաց կտակի՝ իր կ'օրք ըլլայտնէ, որ եթէ գաւառներու մէջ պատահաւորապէս կարգաւորանին, և եթէ Պօլսոյ մէջ Ըլլայ Պատրիարքարանին խմաց կըտրուի որ ստուգուեան վերջը կըհաստատուի :

Բ. Բերանացի յայտարարութեամբ չըլլալով գրաւոր եղած կտակն է, որ կտակարարը կըտարողքէ նախ կամ եթէ գիր չգրած կըկնքէ կամ կըմատնահարէ և կամ խաչ նշան կըգնէ, և ապա 2—3 կրօնական և աշխարհական անձինք վկայ գրուելէն ետքը, եթէ Պօլսոյ մէջ է, Պատրիարքարանին, իսկ եթէ գաւառաց մէջ է, առաջնորդին կամ փոխանորդին վաւերացմամբ օրինաւոր կըլլայ :

Գ. կտակագիր մը վկայից ներկայութեամբ պատրաստուած չըլլալով հանգ երձ' օրինաւոր և վաւերական կըլլայ, եթէ կտակագիրն սկիզբէն մինչև վերջը կտակողին ձեռագրովը շինուած և ստորագրութեամբը հաստատուած է :

Դ. կտակողին մահուանէն վերջը երեւան գաւառ մտք գաղտնի կերպով շինուած կտակագիրն է, որ կտակողը պահարանի մը մէջ կըփակէ և վրան կըկնքէ, և իր և 2—3 վկայից ստորագրութեամբ կըվաւերանայ պահարանը :

Ե. Գաւառներն եթէ կտակներու մասին վէճ ծագի, նախնական քննութիւնը կըլլայ առաջնորդարանի մէջ խառն ժողովով, և վերաքննութիւնը կըլլայ Պատրիարքարանի մէջ : Ամեն կըտակաց արձանագրութիւնքը և գործադրութիւնները իրենց պատկանած տեղերը ժողովով

մատուց նկարագրութիւնն հարցադած է մեզ յատուկ յօդուածով մի, որ հետեւեալն է :

«Տարւոյս Մարտ աշուոյ 26ին տեղւոյս եկեղեցեաց աւագ քահանայն Գրիգոր Աստուածատրեան տէր Գրիգորեանց, կնքեց իւր երկրաւոր կեանքը և փոխեցաւ առ Աստուած, անմիտիտար և մեծ սգոյ մէջ թողնելով իւր ամուսինը և ինն չափահաս զաւակունքք, որոց համար հոգածու հայր էր : Բարեխիշատակ հանգուցեալն որ 1845 թուականին ձեռնադրուած էր քահանայ Քիչնէ քաղաքի մէջ իղմիրցի Գեորգ եպիսկոպոսէն, երեսուն տարի էր որ կըծառայէր Ս. Պետերբուրգայ Հայոց եկեղեցեաց մէջ, ամենայն ջերմեւանդութեամբ հովուելով մայրաքաղաքիս պատուելի սակաւաթիւ ժողովուրդք : Նա իւր անհամեմատ բարի բնաւորութեամբն ամենեցուն հետ գիտէր որպէս արժանն է՝ սիրով կենցաղավարիչ և ամենեցուն հաճոյանալ ուստի որպէս արթուն հովիւ՝ ժողովուրդոց յարգանքը և սէրը կըլայտելէր միշտ, և էր յայտ ամենեցուն պատկառելի հայր : Արպէս ժիր մշակ զարմանալի իմն կերպով տիրած էր հանգուցեալը եկեղեցին, ուր միշտ կը յաճախէր, և արի իւր պաշտօնին մէջ . այլև հմուտ էր եկեղեցեական կարգաց և յոյժ սիրով ժամասացութեան . նաև քաջ տաղտաաց, որոյ համար շատ յաջողակ և ներդաշնակ ձայն ևս ունէր : Միով բանիւ, լուսահոգին էր այն հինաւուրդ եկեղեցեականներէն մէկը, որ թէև բարձր ուսում չունէր, սակայն բարոյական և առաքինութիւն ունէր, որ առ հասարակ և մանաւանդ եկեղեցականաց առաջին և գովելի արժանաւորութիւններէն մէկն է : որոյ համար իսկ այնչափ կըսիրէին զնա թէ՛ իշխանքն և թէ՛ հասարակ ժողովուրդը :

«Անբժշկելի և անտանելի սրտի ցաւը՝ որ երեք տարիէ ՚ի վեր կընեղէր և կըտանջէր զինքը, այնպէս մէկ րոպէի մէջ քանդեց մարմնոյն այն գեղեցիկ շինուածքը, իւր վաթսուներկու ամաց հասակին մէջ, որ ինքն ևս չխմացաւ . ըստորում մէկ այլ ննջեցալ դէպի հանգստարանք յուղեորեց ժամանակ յանկարծ ճանապարհին վայր անկաւ և հոգին աւանդեց նոյն րոպէին :

«Թաղման օրն որ էր Երզնկաղարի կերակէն սոգորականէն շատ աւելի բազմութիւն կայր եկեղեցին, որոնք յատկապէս իւրեանց հանգուցեալ հօր քահանայապետը թաղման փառաւոր հանդէսը տեսնելոյ և իւրեանց վերջին հրաժարականը տալոյ համար եկած էին Ս. Եկեղեցին, ըլլալէն վերջը արդիւնքը կըհաստորդուի Պատրիարքարանին՝ արձանագրուելու համար :

Պատրիարքարանս կտակի մտօնի տրոգէս յարմար դատած ըլլալը յայտնելէ վերջը, անտէր որքոց համար ալ պատշաճ կըգատէ, որ այնչափաց համար եթէ գաւառաց մէջ են, Առաջնորդաց իսկ եթէ Պօլսոյ մէջ են, Պատրիարքարան միջոցաւ հաւատարիմ և փառահովութեան արժանի Լուսնակալ կարգուի, և որքին ստացուածքը չըլլացնելու և նորա ապրուստին և կրթութեանը օտին պէտք եղածը անթերի գործադրելու համար, պատուաւոր ու հարուստ երաշխաւոր և գիր առաջնորդ մանրամասն արձանագրանաց յատուկ տուժարաց մէջ է :

Իւր անժառանգ մեռնողներու թողուցած գոյքը և ստացուածքը եթէ Պօլսոյ մէջ է՝ Պատրիարքարանը, իսկ եթէ Գաւառաց մէջ է՝ Առաջնորդարանը ՚ի գիր տունու և պահէ : Երէ խնամակալաց վրայք դանդաւ Ըլլայ և դատ պահանջուի, պարտաւարտաճը անօրինելու համար, եթէ Պօլսոյ մէջ է՝ Պատրիարքարանիս, իսկ եթէ Գաւառաց մէջ է՝ Առաջնորդարանաց յանձնուի նոյն դատք :

Ահաւասիկ անտէր ու անտք որքոց ստացուածոց պահպանութեանն և ապահովութեանը մասին Պատրիարքարանիս արդէն ՚ի գործ դրած և դնելիք եղանակներն ասոնք ըլլալով, թէ՛ տոյն հիմնական եղանակներուն, և թէ՛ ասոնց մասնաւորութեանը վերաբերեալ Պատրիարքարանիս պատրաստելիք կանոնագրութեան գործադրութեան մասին Ձեր Բարձրութեան կամքն ու հրամանը խնդրելով, մնա՛ք :

որ այն օր իւր սրբազանագործ պաշտօնեաներէն մեկուն պիտի յուղեորէր զնալ ՚ի տուն իւր յաւեանից և առ ցանկալին իւր Գրիգորեան, առ ՚ի կալ միջնորդ վասն փոքու հօտին իւրոյ :

«Այն օր պատարագին էր գերա. ծերունին Եփրեմ վարդապետ Ալթնեանց, որ ողջունի փամանակ, որպէս օրէն է՝ սուրբ Մեռնիւն օծելով զճակատ և զաջոյ ձեռն հանգուցեալ քահանային, իսկ պատարագէն յետոյ որպէս հարկն է՝ հանգիսաւոր կերպով կատարելով հանգուցելոյ կարգը, բաղմութեամբ Հայ ժողովուրդոց քաղաքիս, լի տխուր զգացմամբ յուղարկաւորեցին դէպի հանգստարան, որ մինչև ի կէս ճանապարհն ձեռքով տարին հանգուցելոյ դադարը, և արտասուօք ի գերեզման իջուցին :

«Հանգուցեալը՝ ի վարձ բազմամեայ ծառայութեան իւրոյ վարձատրուած էր ի հոգեւոր իշխանութենէ քահանայական արժաթեայ սկիզբօժ, և վարդապետական ականակուռ խաչիւք իսկ ի մարմնաւոր իշխանութենէ ունէր ստացած զանազան կարգի պատուաւոր շքանշանք՝ :

Յարգոյ խմբագիր Արշալոյս Արարիկեան պատուաւորական լրագրոյն :

Մեծ ուրախութիւն է մեզ ամեն անգամ որ ստպարեկ կուգամք մեր շնորհակալութիւնները յայտնելու ամեն անոնց որ Հայ ընթերցատան յարատուութեան և պայծառութեան համար իրենց օգնութիւնները չեն զլանար : Այս հոգեւորաւոր անձանց կարգէն է նաև մեծա. Պ. Գ. Թ. Բարաղեան(1) ՚ի Չիւրիք՝ որ սկիզբէն ընթերցատանս հաստատութեան և յառաջադիմութեան համար ստակ և աշխատութիւն չինայելէ զատ՝ մինչև հիմա ՚ի հեռուստ ալ միշտ կըլինամէ թէ բարոյապէս և թէ նիւթապէս : Ըսածնուս վերջին մէկ ապացոյցը կըհամարուի այս անգամ զրկած եօթն կտոր աշխարհագրական տարտակները, որոնցմով ընթերցատան սրահը խիստ վայելուչ զարդարուեցաւ . և են Երկրագունտ, Ասիա, Եւրոպա, Ալբիկէ, Ամերիկա երկու կտոր (Հիւսիսայինը և Հարաւայինը զատ զատ) և Ուլկիանիա, որոնցմէ միայն Եւրոպան լոկ Գերմաներէն է, իսկ մնացածները հայերէնով խառն :

Այսու պատեհութեամբ կիտլութամք նաև մեր մասնաւոր շնորհակալութիւնները մատուցանել վերապատուելի Հայր կղեմէս Սիպիլեանի՝ որ իր խոստման համեմատ հաճեցաւ մեծա. Պ. Մամուրեանի միջոցաւ ընթերցատանս թանգարանին 30 հատ Ռուբինեան արժաթի և պղնձեայ այլևայլ գրամներ նուիրել : որոնք հնութեանց թանգարան մ'ալ հաստատուելու գրգռու պիտի ըլլան մեզ՝ եթէ Հայր Սիպիլեանի ազգասիրութեան հետեւողներ ունենամք . ուստի այժմէն կը յայտնեմք այն ամեն ազգայնոց որոնք որ թէ՛ ազգային և թէ՛ օտար որ և է հնութիւն մի ունին և կուզեն ընթերցատանս նուիրել, շնորհապարտ պիտի ընեն զմեզ :

Յարգոյ խմբագիր, խնդրելով որ մեր տոյն համառօտ գրութիւնը Ձեր ազգօգուտ լրագրոյն յառաջիկայ թուով հրատարակելու բարեհաճը մնամք շնորհապարտ : Տնօրէն Խորհուրդ ՀԱՅ ԸՆԹԵՐԾԱՏԱՆ Իղմիր, 10 Մայիս 1876

Հետեւեալ յօդուածոյն հրատարակութիւնը խնդրեցաւ ՚ի մէջ թախանձանօք :

«ԲՆՈՒԹԵԱՆ ՆՈՐԻԼ ՉՐԼԼԱՐ»

Երբեմն կայրելիք աւերակներուն մէջ, Պոլիսի մի քանի ծաղաւիթի մակղերն առնող կապիւլոյի բառարաններու աչքը շող փայլակ մ'երեւցաւ . փոյլակ, որ իմ վրայ կայծակներ թափել կ'երուզէր . բնական է, փայլակէն ետեւ կայծակ կուգայ : Ինչ կայծակներ, բերթարի շուրջով խառնին և փաստարանութիւններ . . . զորս փայլակն 'ս ետեւէն ընդ քալոյ կածէր, Հօնիսիոյ խօսքեւուն վրայ բառային խաչակիրներ կարգելու յոյսով : Իմ սկզբունքը քննողի պատասխանել կըհրամայէ, և ոչ քննողի : Կիրթի և ոչ բիրտի, և լուր կպատուի թէ՛ քննող խօսողի դէմ . և ես զայն ըրի : Այն աւելնէ մինչև այսօր գեռ ական-

(1) Ընթերցատանս հաստատութեան միջոցաւ ցայսօր մեծա. տեարք Գ. Թ. Բարաղեան եւ Յակոբեան եղբայրք իրենց առատաձեռն եւ յարաւեւ անուիրելով այս ուսումնասիրական հիմնադրութեան առաջին կարգի բարեբարներն եղած են . տնք Աստուած որ իրենց բարի օրինակին շատ հետեւողներ աւելնային :

Ծանօթութեան նախադրելի :

Չիս ասկէն չեն պակսիր փայլակին հանճարակից- ներու բզզումը, որք յաճախ յիշելով ինձ զբու- թիւնը պարտութիւն է՝ առածը, կըզատեն զիս իբր խուսափու, չգիտնալով սոքա անշուշտ, որ մեր քաղաքակրթական շինարարին մէջ երթալով կըփոքրի, կընեղնայ «մասնով ազատութիւն» կոչուող հրաշածայն թուշուրին վանդակը, ուր վտանգաւոր է թուշտել թեք կըվիրաւորի . . . այս էր երկրորդ պատճառս :

Արեւելեան հանուրը կրօնական սղատութեան(՞) վայել յարգանքը կըլլայ կրօնը, և դուռած բան մը կըլլերազդէ . և ահա հայ-գրականու- թեան ստիակը կըլուէ, հայ-հանդէսներու Ա- րուսեակը կըմարի . հայ-թերթերու վիշապը քնանալու կըզատապարտուի : «Tu es un homme, c'est tuer une creature raisonnable; mais étouffer un bon livre, c'est tuer la raison elle-même.»

Անցնիմը բնութիւն խնդիրին, մեր յոգուածին բուն նիւթին :

«Բնութեան նորիւ շքար . . .» :

Արմատ եղիք ո՞՞ ձիւներ. զմրուխտ եղիք կար- կուաններ . դժբախ եղիք ո՞՞ ամպեր : Այսպէս կիմաստասիրէ ահա բնութեան նորիւ, իման- վետուր-երկրտանի քննչի : Սակայն բնութիւնը ըսելով իր աննորոգելի գլուխը չհասկցուիր եր- բէք, այլ կըհասկցուի համազօյութեան մէջ ամ փոփուած ամեն դոյութիւններու ամբողջացու- մը . և բնութեան նոր-թիւնը ըսելով նոյն դոյու- թիւններուն մէջ միոյն վերածնունդը, դիզումը կամ ըստ նիւթի դէպքի կատարելութիւն ձգտի- լը : Յիշեցայն բնութիւնը, կամ մարմինը ողորկին մշտակայութեան միջոցով միշտ կընորի, և նո- րիւնը հանդերձ կըհիմնայ : Այս տարուան ու- նեցուած մարմին մը, անցած տարուանը չէ, այսինքն հինարդիւն հանդերձ կընորի : Ողորկ, ըստ նիւթի, որոյ մէջ կամփոփի միշտ կըմեծէ, կարտաքսէ հնութիւնը, և կընորոգի ՆՈՐ, այս- ինքն ընդ հանուր բնութեան ախորժած նիւթով : Հոգիին ստորոգելիքն եղող միտքը, գաղափա- րը, և իմացական ամեն կարողութիւնները, ընդ- միշտ, հիմնարով մէկտեղ նորիւ ու նորոգելու ենթակայ են քանի որ կապրի բանական էակը :

Այս եղանակն ունին համազօյութեան, կամ տիեզերի մէջ գտնուած գրեթէ ամեն էակներ, որոյ հաւաքական և ներդաշնակ կազմութեան կըսուի բնութիւն, և որոյ ըստ հարկի, տարբա- փոփութեան կըսուի նորգո-թիւն բնութեան :

Արարատ աշխարհի կանաչը կամ Հայաստան երկրի բանջարը կըթուի թէ բնութեանն . . . որ կընորի՝ խօսքէս քարին մարդ, սայլին դայլ աստղին ծառ, և թուղթին ուղտ ըլլալ հետե- ցուցած է : Հայտն յառաջ ո՞՞ բնադէտք քիչ մը խտղղկեցէք սա իմ ուղղածիդ—քառասունի փայլակիս . Թ. Կ. ՍՎԱՃԵԱՆ

Զմիւռնոյ Հայոց Ազգատասիրաց ընկերութեան հնգետասաներորդ տարեդարձն՝ 1876 Մայիսի առաջին օրն սկսելով, հետեւեալ օրն՝ որ էր կի- րակի, հանդիսաւոր պաշտօն և պատարագ մա- տուցաւ Ս. Ստեփաննոս եկեղեցւոյն մէջ խնա- մօք վարչութեան յիշեալ ընկերութեան : Պա- տարագիչ քահանայն էր արժաւ տէր Գէորգ ա- լազերեցն, որ միանգամայն վիճակիս Առաջ- նորդական Փոխանորդի պաշտօնն կըվարէ :

Տարեդարձին բարեպատեհ առթիւն յիշեալ պատուական ընկերութիւնն իւր չորեքտասա- ներորդ ամին հաշուեցուցակն հրատարակեց . յորմէ կըտեսնեմք որ նոյն ամին մէջ ի բաժա- նորդաց հաւաքուած դրամն կըհասնի 9543 ընկերութեան շարժուն և անշարժ գույքը և սոկոսք դրամոց 10652.50

Ընդ ամենը ին ան 100էն, ըն 2 76195.50 Ազգատասիրաց ընկերութիւնն իւր չորեքասա- սաներորդ ամին մէջ ծախք ըրեր է 14,425 զու- րուշ, ին ան 100էն, վասն դարման տանելոյ 355 աղքատ ազգային հիւանդաց, յորոց 337ը կա- տարելապէս առ զղացեր են, 10ը մեռեր են և 8ը տակաւին կըզարմանուին :

Յիշեալ աղքատիական բարեպաշտ հաստա- տութեան բժիշկն է հայկազուն մեծարգոյ տօք- ին էօր Թ. Չայեանն : Պօլսեցի, որ իւր ուսմանքն

ամենայն յաջողութեամբ ի փորիղ կատարած և օրինաւոր վիպագիր (տիգրաւ) ընդունած է :

ՔԱՆԱՔԱՆ ԵՆԻՔԻՔ

Զմիւռնիա, 15 Մայիս :

Ինչպէս նախընթաց թուով յայտնած էինք, ի բազմաց հետէ ընտրեալ ազգային երեսփո- խանք քաղաքիս՝ իրենց առաջին նիստն ընելով, ժողովն իւր գիւտնն կազմեց և տեղեկագիրն անուոյս յին յուղարկեց յազգային Պատրիարքա- րանն և Պօլսոյ, որ զինի քննութեան եթէ օրի- նաւոր գտնէ, պիտի վաւերացնէ զայն :

Յիշեալ երեսփոխանական ժողովոյն գիւտնն բաղկացեալ է ի հետեւեալ մեծարգոյ տեւորց, Եսայի Եսայեան, ատենապետ, Խաչատուր Մ. Էրիզեան, փոխ-ատենապետ, Խաչատուր Զարիեան, ատենադպիր, Ստեփան Տէսթէրէճեան, փոխ-ատենադպիր : —Յազգային լրագրաց և Պօլսոյ ուրախ սրտիւ կիմանալք թէ յանցելու մն շարաթու Բ. Դրան կողմանէ յուղարկուեր է ի Պատրիարքարան մեր՝ Բէրայի Հայոց դերեղմանատան մէջ ազգա- յին վարժարան մի շինելու կայտերական հրամա- նագիրն . որ միանգամայն կըհաստատէ եղեր թէ նոյն դերեղմանատանն ի վաղուց անտի Հայոց ազգին անբաճարարելի սեփականութիւնն է :

—Վսե. ճէվտէտ փաշան՝ որում Սուրիոյ կու- սակալութիւնն յանձնուած էր, Հասարակաց կրթութեան նախարար անուանեցաւ, և Գոն- ետի նախորդ կուսակալ Վէլիէտտին փաշան Պրուսայի ընդհանուր կառավարիչ կարգեցաւ փոխանակ Միխէլ փաշային, որ ինչպէս յայտ- նի է, նախարարաց խորհրդոյն անդամ անուա- նեցաւ առանց յատուկ պաշտօնի :

—Քաղաքիս նախագատ ատենանին (թէմլիքը հուգուգ) անդամքն Բարձրագոյն Դրան նորա- հաստատ հրահանգայն համեմատ օրինաւորա- պէս ընտրեցան, որք են մեծա- տեսքք Մուս- տաֆա Էֆէնտի և Էթէմ Էֆէնտի (մահմետա- կան), Թագուր Էֆէնտի Պարմանքեան (հայ), Մինա Էֆէնտի Խամսօրուլօ (յոյն) և Ահա Է- ֆէնտի (հրեայ) :

—Կըլբուրդ դարձեալ թէ գաւառական վար- շութեան ժողովոյն (մէճիսի իտարէ) անդամքն ըստ նոր հրահանգաց ընտրուեր են, որք յե- տագայ մեծարգոյ անձինքն են . այսինքն ի մահմետականաց՝ Էվլիազատէ Մէհմէտ Էֆէն- տի, Լէպլէպիճիզատէ Մէհմէտ—Պէյ և Մէ- հմէտ Ալի աղա զատէ Ռաշիտ—Պէյ . ի Հայոց՝ մահմետի Յակոբ Տայիեան, ի Յունաց՝ Եանի ճարթըլօղլու, և ի հրէայի՝ Իզաք Տանօն :

—Անցեալ կիրակի օրէն սկսեալ հետզհետէ հասին ի նաւահանգիստ մեր 5 անդրիական, 1 գազդիական և 4 իտալական զրահաւոր դատ- րագմական մեծ շոգեհաւք . նմանապէս 1 սու- րիական գորվէթ և 1 փոքրիկ հելլենական պա- տերագմական շոգեհաւք, ընդամենը 2 հատ :

Անգղիոյ վեհափառ Թագուցոյն ծննդեան տարեդարձին տօնախմբութիւնն շորեքշաբթի օրն կատարելէ ետեւ, վերջեալ անգղիական նաւերն որոնք Տրիմինտ ծովապետին հրամանա- տարութեան ներքե վըգտնուին, հետեւեալ օրն մեկնեցան : Նա՛ Քան զմեկնիլն, Տրիմինտ ծո- վապետն ընդհանրութեամբ իւր գլխաւոր պաշտօ- նատարայ 1 միտք ճոյի Անգղիոյ փոխ-հիւպա- տոսի՝ այցելութեան գնաց մեր վեհ. վալին, լմէ արժաւոր մեծարանօք ընդունուեցաւ :

Նմանապէս Գազդիական և Աւստրիական պա- տերագմական նաւուց հրամանատարքն փութա- ցան այցելութիւն ընելու վսե. խորշիտ փաշային : —Կըհաւաստեն թէ ի մտ աւուրս դերմանա- կան նաւատորմի մի ևս պիտի գայ ի քաղաքս : Ամոյս 13ին կէսօրէն ետեւ անգղիական Rapid անուն գորվէթն հասաւ ի նաւահանգիստն մեր :

—Կ. Պօլսոյ Վիզմեյիս օրագիրն կըմանու- ցանէ թէ մինչև յայսօր Սէլանիկի մէջ կախուած յանցաւորաց թիւն 14ի հասեր է, որոց համար դատաւիճիւտ տրուած է եղեր իբրև մանակից սպանման Գերմանիոյ և Գաղղիոյ հիւպատոսաց :

—Գորգչաքով իշխանին Բարձրագոյն Դրան մատուցանելու յիշատակագրոյն համար խօսք

մի տարածուեր է ի Կ. Պօլիս՝ թէ կայտերական կառավարութիւնն պիտի չընդունի զայն :

—Արշալոյ նախընթաց թուոյն Չորդ երկրի բանասիրականին Յորդ էլին մէջ տպագրական սխառմամբ շփեցի դրուեր է . զոր ընթերցողը հարկաւ իմացած է թէ շփեցի պիտի լինի :

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Բամպակն միշտ ի հանդարտութեան գտանիք Մեքենայով մաքրուած առաջին տեսակն վա- ճառեցաւ 320—325ի կենդինարն, երկրորդ տե- սակն 295—300 զուրուշի և Ատանայինը 280ի :

Ափիօնէն այս շաբթու 100 կողովի չափ վաճառ- անցաւ վասն Ամերիկայի, 125—127 զուրուշով առ չէքին . սակայն այսօր 130 զուրուշով անգամ վաճառող չկայ . վասնզի ի ներքին կողմանց հասեալ լուրքն կըմանուցանեն թէ նոր հունան կիսով չափ նուազ է քան զամինն անցելոյ :

Ոչխարի նոր բուրդէն 500 կենդինար վաճառ- անցաւ երէկ 310 զուրուշի : Փալամուտի Անգղիոյ տեսակն 80—90 ի վաճառ- անցաւ և մէկ շուր կօշուածը 112—115ի :

ՇԱՆՈՒՅՈՒՄ

ՀՐԱԻՒՐԱԿ ԱՐԱՐԱՏԵԱՆ

Ամենատարի Խորմեան Ա. Հայրիկին բանա- տեղծական ոտանաւոր երկասիրութիւնն է ի պարզ գրաբար գեղեցիկ բարբառ, բաժանեալ ի հիցց նուա- ցաս : Այս հայրեմասիրական ընտր գործն, որ երկ- րորդ տպագրութեամբ ի տոյս ընծայեցաւ զնորին ազնուամեծար Յակոբ Էֆենտիի Նորատունկեան բաղկացեալ է ութսուտ 136 երեսներ հանդերձ յա- ւելուածովն, որ է «Միմուռք Հայրեմասիրի» վերա- գրով ողբերգութիւնք ի վերայ քաջին Վարդանայ երկակիցացն նորա, եւ ի վերայ սրբոց նախատակա- ցն Ղեւոնդեանց :

Յիշեալ երկասիրութեան առաջին տպագրութիւնն որ սպասեալ է, բաղկացեալ էր ի շորից նուազաց միայն . ուստի հիցցերորդ նուագն նոր է . յորում Ա- նդրիական իրաւացի գանգաւ կըբառնայ առ Ա. Սա- հակ հայրապետն ընդհանր այնցիկ, որք գրաբար գե- ղեցիկ լեզուն՝ մեր ուսանելի, ուսուցանելի եւ ազգին միջ տարածելի դանդաղելով, մեռաւ այն եւ բողո- կոսն, եւ զաշխարհիկ անխանց բարբառն միայն կըգործածեն իրենց ամեն աշխատասիրութեանց մե- շ : ՀՐԱԻՒՐԱԿ ԱՐԱՐԱՏԵԱՆ մատեանն ի տոյս ԵՍՏՈՒ- յեցաւ այս տարի ի Կ. Պօլիս ի տպագրութիւն Ե. Մ. Տնտեսեան եւ որք բարակագմիւս ԻՄ 2 Ֆրանք է :

ՕՐԱԿԱՆՔԱՆ

Ի լիւարտար կենսագրութեան սրբազան Հայրապետի Ներսիսի Ե. վեհափառ եւ ազգասեր կարողի- կոսի ամենայն Հայոց :

Յօրինեալ ի ծերունի Գաբրիէլ Պատկանեան պատուելիէ :

Արշալուսոյ միջոցաւ մաս առ մաս հրատարակեալ եւ զատ բարոյ վերայ եւս տպեալ այս գեղեցիկ պատ- մութիւնք՝ բաղկացեալ է ի մի բողոքագրութեան հատոր, որ ընդամենայն կըբաղկանայ ութսուտ 165 երեսներ : Կըվաճառի ի քաղաքիս՝ ի գրատունն Արշալուսոյն, եւ ի Կ. Պօլիս՝ Ս. Ղ. եւ Եազմանեան գրավաճառաց խանութն, Եեկի ճամբի փողոց բիւ 8 : Գին 1 Ֆրանք 30 ասնքիմ :

ՄՆՏԱՂԵԱՆ (ՄԱՏԷՆԻ) ՉԵՐՄՈՒԿԻ

Իմաց կրտուռի հասարակութեան քէ ի մուտս մեր նաւանագատին՝ բերդին մօտ եղած մետաղեայ տար շրոց սեղեակներն մարքուած եւ ամեն կերպի կար- գազրուած պատրաստ են . ուստի այս շէյմուկներն երբայլու կամք ունեցող անձինքը պիտի գտնեն անց սննդեան հարկաւոր ամեն պիտոյքը առատապէս : Այլեւ մեծ հիւրասիրութիւն եւ բարեոք ծանայա- րիւնք պիտի լինի նոցա :

Սեղեկաց գինն հետեւեալ կերպի որոշեցաւ . վերի սեղեկաց իւրաքանչիւրը՝ օրը դուրուշ 45 վարի » » » » » » 40

Խմբագիր—տէր Լրագրոյս, Գ. Վ. Պալատաւորեան :